Կարգապահական գործ թիվ ԿԳ-16052

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2016 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 238-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/159-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԱՒՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Մելանյա Առուստամյանի, Խորհրդի անդամներ՝ Սիմոն Բաբայանի, Հարություն Հարությունյանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Լուսինե Սահակյանի, Երվանդ Վարոսյանի,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Սուսաննա Հարությունյանին (փաստաբանական գործունեության արտոնագիր № 343) (**այսուհետ նաև՝ Պատասխանող**), կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

<u>1.Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>

25.02.2016թ. Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում **(այսուհետ՝ Պալատ)** մուտքագրվել է Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի **(այսուհետ նաև Դատարան)** դատավոր Ռաֆիկ Խանդանյանի՝ «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու դիմումով ՀՀ փաստաբանների պալատ դիմելու մասին» 11.02.2016թ. որոշումը **(այսուհետ՝ Որոշում),** որում նշվել է, որ ՀՀ վարչական դատարանի վարույթում է գտնվում վարչական գործն ըստ հայցի Կարինե Խորասանյանի և Անուշ Դաշտոյանի ընդդեմ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, երրորդ անձ Խաչատուր Բահարյանի վարչական մարմնի գործողություններն ոչ իրավաչափ ճանաչելու և որպես հետևանք՝ առուվաճառքի պայմանագիրը, 02.06.2003 թվականին կատարված իրավունքի գրանցումն և 30.07.2008 թվականի վերագրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Որոշմամբ Դատարանը նշել է, որ քննարկվող գործով հայցվորների ներկայացուցիչ Սուսաննա Հարությունյանը գործի քննության ընթացքում իր դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվելու, դատավարական պարտականություններն անհարգելի պատճառներով ոչ պատշաճ կատարելու, դատավորի կարգադրությունները չկատարելու և դատական նիստերի բնականոն ընթացքը խոչընդոտելու միջոցով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք է դրսևորել: Դատական նիստերի ընթացքում դրսևորած վարքագծով, այն է՝ արտահայտած դիրքորոշումներով, վիրավորական արտահայտություններ է թույլ տվել ինչպես նախագահող դատավորի և երրորդ անձի ներկայացուցչի, այնպես էլ սույն գործով որոշակի դատավարական գործողություններ կատարած նախկին դատավորի հասցեին, մասնավորապես «

Դատարանը նաև հայտնել է, որ նշվածից բացի, չարաշահելով իր իրավունքներն ու բարեխղճորեն չկատարելով պարտականությունները, անհիմն պատճառաբանություններով ու միջնորդություններով փորձել է ընդմիջել կամ հետաձգել դատական նիստերը՝ զրկելով դատարանին գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու հնարավորությունից:

Մասնավորապես, 26.01.2016թվականի դատական նիստի ընթացքում հայցվորների ներկայացուցիչ Սուսաննա Հարությունյանը միջնորդել է որպես վկա դատարան հրավիրել էմմա Շաբոյանին, սակայն դատարանը մերժել է միջնորդությունը: Նշվածի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով (Դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել, եթե նա տեղյակ է այնպիսի փաստերի կամ հանգամանքների, որոնք կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով նրա անկողմնակալության մեջ: Ինքնաբացարկի հիմքերը ներառում են ի թիվս այլոց այն դեպքերը, երբ դատավորը կանխակալ վերաբերմունք ունի որպես կողմ հանդես եկող անձի, նրա ներկայացուցչի, պաշտպանի, դատավարության այլ մասնակիցների նկատմամբ)՝ վերջինս ինքնաբացարկ հայտնելու միջնորդություն է ներկայացրել, որը դատարանի 04.02.2016 թվականի որոշմամբ մերժվել է: Այնուհետև, 10.02.2016 թվականին կրկին նույն հիմքով ինքնաբացարկ հայտնելու միջնորդություն է ներկայացրել, որը դատարանը քննարկման առարկա չի դարձրել, որից հետո խնդրել է դատական նիստը հետաձգել ինքնազգացողության վատացման պատճառով և այլն:

Մինչդեռ, գործի դատաքննության նախապատրաստությունն և բուն դատաքննությունը պետք է իրականացվեն ողջամիտ ժամկետներում, քանի որ բոլորը հավասար են օրենքի և դատարանի առջև ու դատարանը պարտավոր է ապահովել, որ կողմերն ունենան հավասար հնարավորություններ գործի քննության ամբողջ ընթացքում, ներառյալ յուրաքանչյուր կողմին ընձեռել քննվող գործի վերաբերյալ իր դիրքորոշումը ներկայացնելու լիարժեք հնարավորություն:

Որոշմամբ նշվել է, որ Դատարանի 10.02.2016 թվականի որոշմամբ դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվելու, դատավարական պարտականություններն անհարգելի պատճառներով չկատարելու և ոչ պատշաճ

կատարելու, ինչպես նաև դատավորի կարգադրությունները չկատարելու համար փաստաբան Սուսաննա Հարությունյանի նկատմամբ կիրառվել է դատական սանկցիա նախազգուշացում, սակայն դրանից հետո ևս վերջինիս նման վարքագիծը կրել է շարունակական բնույթ:

Դատարանի գնահատմամբ փաստաբան Սուսաննա Հարությունյանը նման վարքագծով դրսևորել է փաստաբանին ոչ հարիր վարքագիծ, որով խոչընդոտել է արդարադատության իրականացմանը, քանի որ դատական նիստերի անընդհատ և անհարկի հետաձգումները կհանգեցնեն դատավարության մյուս մասնակիցների իրավունքների խախտմանն ու ռեսուրսների անհարկի վատնմանը, ինչը, սակայն, անթույլատրելի է:

Վերոնշյալի հաշվառմամբ Դատարանը՝ ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածով և 127-րդ հոդվածի 10-րդ մասով, 11.02.2016թ. կայացրել է «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու դիմումով ՀՀ փաստաբանների պալատ դիմելու մասին» որոշում, որով որոշել է. *«Թիվ ՎԴ/8610/05/13 վարչական գործով հայցվորների ներկայացուցիչ փաստաբան Սուսաննա Հարությունյանի (արտոնագիր 343) նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար դիմել ՀՀ փաստաբանների պալատ:»:*

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 09.03.2016թ. թիվ 84-Ա/ԿԳ-16052 որոշմամբ Փաստաբան Սուսաննա Հարությունյանի (արտոնագիր թիվ 343) նկատմամբ հարուցել է կարգապահական վարույթ՝ Կանոնագրքի 4.1 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով:

14.03.2016 թվականին փաստաբան Սուսաննա Հարությունյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի նախապատրաստումը հանձնարարվել է կարգապահական գործ նախապատրաստող անձ Հովհաննես Մաթևոսյանին Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի համաձայն եզրակացություն կազմելու համար:

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Դիմողը Պալատի խորհրդի նիստերին չի մասնակցել և բացատրություն չի տվել (Խնդրել է գործը քննել իր բացակայությամբ):

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>

Պատասխանող Սուսաննա Հարությունյանը նախապատրաստողին 25.04.2016թ. տրված բացատրությամբ հայտնել է հետևյալը.

Վարչական դատարանի նախագահող դատավոր՝ Ռ.Խանդանյանի կողմից, իր վստահորդներ՝ Անուշ Դաշտոյանի և Կարինե Խորասանյանի վերաբերյալ թիվ ՎԴ/8610/05/13 վարչական գործով, իր նկատմամբ դատական սանկցիա կիրառելու, կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ առարկություններն և դրանք հիմնավորող անհրաժեշտ ապացույցները, կհաստատեն, ոչ թե իր կողմից դատական նիստերն անհարկի ձգձգելու, իրավունքը չարաշահելու, դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվելու, դատավարական պարտականություններն անհարգելի պատճառներով, ոչ պատշաճ կատարելու, դատավորի կարգադրությունները չկատարելու դատական նիստերի բնականոն ընթացքը խոչընդոտելու, դատարանի կատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու, այլ դատավորի կողմից ՝ իր նկատմամբ երրորդ անձի փաստաբան՝ Հարություն Ազատյանի համեմատ՝ անհավասար և պարբերաբար նվաստացնող արտահայտություններով դիմելու, որպես փաստաբան, իր վստահորդների շահերին առնչվող վարչական գործով, նախապատրաստական փուլից, թռիչքային ձևով դատաքննության անցնելու, այդ կապակցությամբ կազմած որոշման բովանդակությունում, հայցապահանջը, հիմքերն ու ներառված պատասխանողների հերթականությունը ոչ իրավաչափորեն փոխելու, խեղաթյուրելու, փաստորեն, իր, որպես փաստաբանի դիրքորոշմանը /գրավոր/ և հրապարակայնորեն պաշտպանությանը ոչ իրավաչափորեն միջամտելու, դրան արգելելու շարժառիթով, իր նկատմամբ, սանկցիա կիրառելու, բացի այդ, նոտարին պատշաճ ծանուցելու հարցում՝ խոչընդոտելու, դատավորին հայտնած ինքնաբացարկի մերժման որոշումը բողոքարկելու, ներկայացրած նոր ինքնաբացարկի, գործի վարույթը կասեցնելու միջնորդությունների վերաբերյալ խորհրդակցական սենյակ չհեռանալու,որոշում չկազմելու,չտրամադրելու,նոր ինքնաբացարկ ներկայացնելու նպատակով դատական նիստը չընդհատելու, դատարանից դուրս ապացույցներ հետախուզելու, որպես բացարկված դատավոր, գործի քննությունը շարունակելու, գործով կարծիք հայտնելու, իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ դատական նիստի ժամանակ հայտարարելու միջոցով, իրենց դատավարական իրավունքները սահմանափակելու միտումով կիրառած սանկցիայում անհիմն պատճառաբանություններ զետեղելու փաստերը:

Հայտնել է, որ Դատավոր Խանդանյանի կողմից, իր որպես փաստաբանի, ի սկզբանե՝ 15.12.2015թ. սկսված և դրանից հետո դատական նիստերի ժամանակ, բարոյական ճնշման ենթարկելու նպատակով տարաբնույթ տեխնոլոգիաներ է գործադրել՝ իրեն անընդմեջ՝ «հայցվորի ներկայացուցիչ», իսկ 3-րդ անձ Խ.Բահարյանի ներկայացուցիչ՝ Հարություն Ազատյանին՝ «հարգելի փաստաբան» արտահայտություններով, անհավասար վերաբերմունք է դրսևորել: Ավելին, ի սկզբանե՝ դատական նիստը սկսելու պահին, բոլորի ինքնությունն ու լիազորությունները պարզելուց հետո, դատական նիստերի ընթացքում, մի քանի անգամ իրեն ուղղված հարցադրումներով «Դուք փաստաբան եք» թերահավատ արտահայտություններն, իրականում նսեմացնելու տպավորություն ստեղծելու ակնառու փաստեր են /տես՝ ձայնագրությունները/, որոնց շարժառիթը հանդիսացել է յուրաքանչյուր նշված արտահայտություններից առաջ, իր կողմից ի պաշտպանություն իր վստահորդների շահերի առնչվող վարչական գործով, վճռաբեկ կամ եվրոդատարանի, սահմանադրական դատարանի նախադեպերի մատնանշումը՝ «պետական մարմինների ներկայացուցիչների

կողմից տրված բացատրությունները որպես ապացույցներ չօգտագործելու», «բացառապես իմպերատիվ նորմերով նախատեսված ապացույցներով ղեկավարվելու», «կողմի փաստարկները հիմք են դատարանի համար այնքան ժամանակ, քանի դեռ պատասխանողները վերաբերելի ապացույցներով չեն հերքել հակառակը» (տես՝ դատական նիստերի ձայնագրությունները):

Չարաշահելով դատավորի բարձր կոչումն ու դատավորի հեղինակությունը, դատավոր՝ Ռ. Խանդանյանը վարքագծի այնպիսի խախտումներ է թույլ տվել, որոնք օրենքով նախատեսված չեն (15.12.2016թ-ից մինչև 11.03.2016թ. ներառյալ), այսպես՝

ա.) Վարչական գործը դատավոր՝ Ռ.Խանդանյանը վարույթ է ընդունել՝ 16.10.2015թ., նախկին դատավոր՝ Ա.Դարբինյանի կողմից, 27.08.2015թ. թիվ ՎԴ/8610/05/13 հայցվորների ներկայացուցչի՝ Ս.Հարությունյանի դատավորին ինքնաբացարկ ներկայացնելու մասին միջնորդությունը բավարարելու վերաբերյալ որոշում կայացնելու, գործն իրեն հանձնելուց հետո, որը վերանշանակվել է՝ 15.12.2015թ-ին (տես՝16.10.2015թ. և 27.08.2015թ. երկու նշած որոշումները), որը վկայում է դատավոր՝ Ա.Դարբինյանին, իր կողմից վիրավորական արտահայտություններ կատարելու մասին մատնաշումը չի համապատասխանում իրականությանը, հայտնի չէ, թե այդ որտեղ է կարդացել դատավոր Ռ.Խանդանյանն այդ մասին, և արդյոք դատավոր Ռ.Խանդանյանն իրավասու էր այդ հիմքով ևս սանկցիա կիրառել:

բ.) 15.12.2015թ. ժամը 11:00-ի նշանակված նախնական դատական նիստի ժամանակ, Պատասխանող՝ ՀՀ կառավարության ներկայացուցիչը միջնորդել է՝ վերջինիս որպես ոչ պատշաճ պատասխանող փոխարինելու հարցը քննարկել, իսկ նա միջնորդել է, որպես պատասխանող ներառել՝ «Կենտրոն» նոտարական գրասենյակի նոտար՝ Է. Շաբոյանին: Որը դատարանը բավարարել է՝ նույն օրը կայացնելով որոշում /տես՝որոշումը/.

գ.) Սակայն դատարանն, առանց հայցի հիմքը, առարկան պարզելու, այլ միջնորդություններ, հայտարարություններ անելու առաջարկ ներկայացնելու, նոր ներառված պատշաճ պատասխանողին պատշաճ ծանուցելու նպատակով, գործի քննությունն ավարտելու, այն հետաձգելու փոխարեն, թռիչքային անցում կատարելով, հայտարարել է գործը դատաքննություն նշանակելու մասին, նիստն ավարտելով /տես՝դատական նիստի ձայնագրությունը, 15.12.2015թ. գործը դատաքննություն նշանակելու մասին/:

Դ) Հաջորդ հրավիրված՝ 26.01.2016թ. ժամը 11-ին դատական նիստից մեկ օր առաջ՝ 25.01.2016թ. դատարանի գրասենյակ մուտքագրված դիրքորոշում է ներկայացրել, որով նշված դատավորի ուշադրությանն է արժանացրել, դեռևս նախորդ նախագահող դատավոր՝ Ա.Դարբինյանի կողմից, երկու տարի պարբերաբար դատական քաշքշուկների արդյունքում՝ «նոտարի դեմ ուղղված պահանջները մերժելու՝ նոտարին իրավահաջորդով փոխարինելու, որպես ոչ պատշաճ երրորդ անձ մասնակիցների կազմից հանելու» վերաբերյալ մեր վերաքննիչ բողոքը, ՀՀ Վարչական վերաքննիչ դատարանի նախագահող

դատավոր՝ Ա.Աբովյանի 05.12.2013թ-ի թիվ ՎԴ/8610/05/13 որոշմամբ բավարարելու, դատավոր՝ Ա.Դարբինյանի որոշումները վերացնելու փաստերը /տես՝ 25.01.2016թ. դիրքորոշումը/: Որը վկայում է դատավոր՝ Ա.Դարբինյանի կողմից,երկու տարի քաշքշուկներ կատարելը վիրավորական արտահայտություն չէ:

ե.) Ներկայացնում է դատավոր Ռ.Խանդանյանի կողմից 16.10.2015թ. « վարչական գործը վարույթ ընդունելու», 15.12.2015թ. «Գործը դատաքննություն նշանակելու մասին» որոշումների՝ ներածական և նկարագրական մասերում Հայցվորների ապացուցման առարկան/հիմնական պահանջները, լրացուցիչ պահանջները և պատասխանողների,հիմքերի հերթականությունը խեղաթյուրելու վերաբերյալ, դրանք ուղղելու, չխեղաթյուրելու խնդրանքով դատավորին ուղղված դիրքորոշումը: Որում մատնանշել է Վերաքննիչ վարչական դատարանի ուժի մեջ մտած՝ 05.12.2013թ. որոշում կայացնելուց հետո, դրանք անփոփոխ մնալու մասին /կից՝ 05.12.2013թ. թիվ ՎԴ/8610/05/13 որոշումը:

Այնինչ, դատավոր Ռ.Խանդանյանի կազմած նշած որոշումներով՝անշարժ գույքի կադաստրի տ/ս-ն և նրա դեմ հիմնական պահանջը տեղափոխվել է երկրորդ պլանի վրա, իր տեղը զիջելով՝ երկրորդ պատասխանողին և լրացուցիչ պահանջին: Իսկ որ ամենակարևորն է՝ որպես հիմնական առաջին պահանջի հիմքում դրված փաստ՝ անշարժ գույքի կադաստրի տ/ս-ի կողմից,Ամիրյան փող18 շենքի 89 բնակարանի Անուշ Դաշտոյանի և Կարինե Խորասանյանի անվամբ 27.05.2003թ. կազմված, թիվ ԱԱ-035065 միասնական տեղեկանք կազմելու և տրամադրելու հիմքով գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու հիմնական պահանջը, դատավոր Ռ.Խանդանյանը պահանջում և խոչընդոտում էր, այդ թվում, Հայցվորիս ներկայացուցչին բացման խոսքում՝ 11.02.2016թ. դատական նիստի հենց սկզբում հրապարակել, որպես հիմնական պահանջ, հայտնելով՝ թե դատաքննություն նշանակելու մասին որոշմամբ արդեն որոշվել է առաջին պահանջը՝ Կ.Խորասանյանի կողմից անստորագիր դիմումը կադաստրի կողմից ընդունելու հիմքով, գործողությունը ոչիրավաչափ ճանաչելը, որից անմիջապես հետո, հետևեց, դատավորի կողմից, իր նկատմամբ սանկցիա կիրառելու վերաբերյալ հայտարարությունը թե. (էլի չեք ենթարկվում դատարանի կարգադրություններին)արտահայտությունը: Այնինչ, դատավորը նախապես չէր ստուգել, պարզել, իր վարույթ ընդունած գործով, Հայցվորի դիրքորոշումն այդ հարցում: Ավելին անտեսելով, առանց իրավական հիմքի, ոչ իրավաչափորեն, փոփոխել է հայցվորի հայցի առարկան ու հիմքը, ներառված պատասխանողներին, հիմնական և լրացուցիչ պահանջները (տես՝11.02.2016թ. դատական նիստի ձայնագրությունը, դատաքննություն նշանակելու մասին և Վարչական վերաքննիչ դատարանի՝05.12.2013թ. թիվ ՎԴ/8610/05/13 որոշումը):

Զ) Պատասխանող նոտարի կողմից, փոստային առաքանին ստանալուց հրաժարվելու վերաբերյալ 02.02.2016թ. դատական նիստի սկզբում ետ վերադարձրած, առանց հրաժարման պատճառի նշումի, ստորագրության, առանց դրոշմանիշի համարի,դատարկ ծանուցագիրն ու անդորրագիրը անարժանահավատ

ճանաչելու իրենց առարկությունը դատավորն անտեսնելով և լսելով, հայտարարեց, թե «դատարանի համար լիովին բավարար է նոտարի կողմից ծանուցագիրը ստանալուց հրաժարվելը, և երկար ժամանակ փորձում էր ապացուցել, որ ոչ թե նոտարն անձամբ է ստորագրում,այլ փոստատարը նշում է կատարում վերադարձի տեղեկանքի վրա և այդ հարցը դատարանի իրավասության մեջ չի մտնում/տես՝ դատական նիստի ձայնագրությունը, առաքանու ծանուցագրի, փոստային ծրարի, անդորրագրի, ետ վերադարձի տեղեկանքի պատճենները, դատական նիստի ձայնագրությունը/:

Մինչդեռ, համաձայն «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդ-ի 2-րդ մասի՝«Ծանուցագրում նշվում են՝Հատուկ առաքման անդորրագրի համարը»,6-րդ մասի «դրամանիշների համարները., 5-րդ մասի՝«նախքան փաթեթեի հանձնումը փոստատարը հավաստիանալու համար, որ փաթեթը հանձնվում է նույն օրենքի 3-րդ հոդ-ում նշած անձին, նշում կատարելով ծանուցագրում այդ մասին՝ իրեն ներկայացված անձը հաստատող փաստաթղթի տվյալները», 4-րդ հոդ-ի 7-րդ մասի՝«Հասցեատիրոջ կողմից առաքանին ստանալուց հրաժարվելու դեպքում, հետ վերադարձի տեղեկանքում նշում է կատարում՝հրաժարվելու պատճառի մասին », որոնք բոլորը բացակայել են, ուստի, իրենց առարկությունը,, «չէ որ օրենքին չեն համապատասխանում ապացույցները», դատավորը վկայակոչել է՝ «Վարչական դատ. ՀՀ օր-ի 64-րդ հոդ-ը, վերը նշված օրենքն» ,առանց մատնանշելու դրանց պահանջները, գտնելով, որ «դատարանը՝նոտարի պատշաճ ծանուցումն ապահովված է» համարում, իսկ որ էլ ավելի ուշագրավ է՝«այդ հարցերը իրավասու չեն դատարանին:»

Որոնք էլ հիմք էին՝կասկածելու դատավորի անաչառությանը, անկողմնակալությանը, արհեստավարժությանը, Ինքնաբացարկ ներկայացնելու համար: Այսինքը, դատավորը փաստորեն իր վարքագծով, դիրքորոշումներով կամ որ նույնն է՝ « դատողություններով .» արտահայտություն, որն բառացի ամրագրված է՝ վարչական և քաղաքացիական դատավարության և Դատական օրենսգրքի բազում դրույթներում (բովանդակության մեջ՝տեղ են գտել իրենից բառացի և տառացի նշանակությամբ, այլ ոչ որպես՝վիրավորական արտահայտություններ են):

Փաստորեն, նոտարի ծանուցումը «պատշաճ համարելով., դատավորը, դատական նիստերից դուրս «ապացույցներ է հետախուզել» / տես՝Դատական ՀՀ օրենսգրքի՝90-րդ հոդ-ի 5րդ մասը/, որի իրավունքը չուներ:

Է)Դատավոր Ռ.Խանդանյանն, իր դեմ ներկայացրած առաջին Ինքնաբացարկի միջնորդության վերաբերյալ մերժման որոշում կայացնելուց, այն գրավոր մեզ տրամադրելուց հետո, իսկ 09.02.2016թ.նույն գործով, Վարչական վերաքննիչ դատարանում նշված մերժման որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքը քննելու, որոշում կայացնելու հիմքով՝կասեցնելու միջնորդությունը,ինչպես նաև 2-րդ՝10.02.2016թ.Ինքնաբացարկի միջնորդությունն երկար քննելուց, անգամ կարծիք հայտնելուց հետո, խախտելով ՀՀ Վարչական դատ. օր-ի 13-րդ հոդվածի ի, Քաղ.

դատ. ՀՀ օր-ի 21-24-րդ, Դատական օր-ի 91-րդ հոդ-ի դրույթներն, առանց խորհրդակցական սենյակ հեռանալու, որոշում կայացնելու, տեղում հրապարակեց, առանց քննության թողնելու մասին: Իսկ 11.02.2016թ.դատական նիստը չընդմիջելով՝ նոր հիմքով բացարկ ներկայացնելու համար, ՀՀ Վարչական դատ. օր-ի 94-րդ հոդ-ի,131-րդ հոդ-ի 1-ին մասի՝10-րդ և 11-րդ կե- տի , ինչպես նաև, ՀՀ ՍԴՈ-719-րդ, 936-րդ որոշումների պահանջներով, առանձին դատական ակտի ձևով 3 որոշումներ չկայացնելով , չհեռանալով խորհրդակցական սենյակ, կրկին խախտել է՝ Դատական ՀՀ օրենսգրքի 90-րդ հոդ-ի բազում դրույթները: Փոխարենն անմիջապես ձեռնամուխ է եղել, իր նկատմամբ սանկցիա կիրառելու որոշում կայացնելուն(տես՝10.02. 2016 թ.երկրորդ՝Ինքնաբացարկ ներկայացնելու միջնորդությունը, 1-ին միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշման բողոքարկման վերաքննիչ բողոքը,կասեցման միջնորդությունը, դատարանի գրասենյակ մուտքագրված, դատական նիստերի ձայնագրությունները):

Համաձայն Դատական ՀՀ օրենսգրքի 90-րդ հոդ-ի՝ բացարկվող դատավորն իրավունք չունի, գործի քննությունը շարունակելու, դատավարական գործողություններ կատարելու:

Համաձայն Վարչական դատավարության ՀՀ օրենսգրքի 131-րդ հոդ-ի 1-ին մասի՝10-րդ,11-րդ կետերի,դատավորը գործով վարույթը կասեցնելու մասին. կազմում է դատական ակտ, իսկ Կասեցման, Ինքնաբացարկի վերաբերյալ կազմված որոշումները բողոքարկվում են՝ վերադասության կարգով:

Սահմանադրական դատարանն, իր ՍԴՈ-719 և 936-րդ որոշումներով, անդրադառնալով դատական բողոքարկման ինստիտուտի արդյունավետ կիրառման օրենսդրական ապահովմանը, այդ թվում վարչական արդարադատության բնագավառում, անհրաժեշտությանը խնդիրը դիտարկելով ինչպես սահմանադրական կարգի սկզբունքներին,արդարադատության նպատակներին, դրա համապատասխանությունը գնահատելու և պահպանելու տեսանկյունից, արտահայտել է մասնավորապես հետևյալ դիրքորոշումները՝

ա)Բողոքարկման ինստիտուտի ողջ տրամաբանությունն՝ընդհանրապես և արդարադատության համակարգի ներսում՝մասնավորապես հանգում է նրան, որ ներքևի օղակի ապօրինի վարքագծի վիճարկումը հասցեագրված լինի բացառապես վերադաս ատյանին /ՍԴՈ-719/.

բ)Սահմանադրորեն նախատեսված է խախտված իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանություն (դրա արդյունավետության) երաշխավորման առանձնահատուկ այնպիսի ինստիտուտ, ինչպիսին է վերադաս դատարանի կողմից դատական ակտի վերանայման՝անձի իրավունքը՝(դատական բողոքարկումը) ՀՀ Սահմանադրություն:

գ)Վերջինս, նաև անձի իրավունքների դատական պաշտպանություն և արդար դատաքննության իրականացման խնդրում պետության առաջնային պարտականությունն է՝որոշակի ընթացակարգի, այդ թվում՝դատական հնարավոր

սխալների ուղղման միջոցով արդարադատության նպատակների իրագործում (ՍԴՈ-936):

Ուշադրության է արժանի, Վերաքննիչ վարչական դատարանի կողմից, 19. 02.2016թ. նշված գործով, դատավոր Խանդանյանի դեմ Ինքնաբացարկի միջնորդության մերժման որոշման դեմ,Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու հանգամանքը և մերժման հիմքը՝ մերժման որոշումները բողոքարկման ենթակա չլինելը, որով նշված դատարանը կազմել է՝ հակա սահմանադրական որոշում: Իսկ դատավոր Խանդանյանի կողմից, իր մերժման որոշման եզրափակիչ մասում՝Ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու մասին որոշումը բողոքարկման ենթակա չլինելու կամ լինելու մասին/տես՝ երկու որոշումները/, Ինչու……:

Փաստորեն, դատավոր Խանդանյանը, գործի ողջ քննության ընթացքում, փաստաբանիս, չի թույլատրել՝ ոչ պատշաճ ծանուցված նոտարին պատշաճ ծանուցել, նախապատրաստական փուլից թռիչքային անցում է կատարել՝ Դատաքննության, իսկ կազմած որոշման մեջ, փոփոխել է՝Հայցվորի հայցի առարկան, հիմքերը, պատասխանողների հերթականությունը, Հայցվորի ներկայացուցչի բացման խոսքի ժամանակ, միջամտել և արգելել է, վերջինիս հրապարակել և պաշտպանել՝ Հայցվորների հիմնական հայցը, հիմքն ու պատասխանողների հերթականությունը, անմիջապես սանկցիա է կիրառել, 2-րդ Ինքնաբացարկի, Կասեցման վերաբերյալ որոշումներ չի կայացրել, նիստի ժամանակ կարծիք է հայտնել,չի հեռացել խորհրդակցական սենյակ, լինելով բացարկված դատավոր՝Վերաքննիչ բողոքն անտեսելով,դեռևս չկայացված դատական ակտի պայմաններում/ կոպտորեն խախտելով Դատական ՀՀ օր-ի 90-րդ հոդ-ի դրույթը՝ 10.02.2016 թ-ին և 11.02.2016թ-ինշարունակել է՝դատական նիստերը, կատարել է դատավարական գործողություններ,որոնք բոլորը վկայել են՝Վարչական և Վերաքննիչ վարչական դատարանների կողմից, արդարադատություն իրականացնելուց խուսափելու, այն չկատարելու մասին/տես նաև՝19.02.2016թ.Վերաքննիչ վար չական դատարանի որոշումը/:

Դատավոր Ռ.Խանդանյանի նկատմամբ վիրավորական «ՋՈՌԲԱ» արտահայտություն չի պարունակում որևէ դատական նիստի ձայնագրություն: Ինչ վերաբերվում է՝ դատավորն օրենքը չգիտի, նորանշանակ է, կամ փորձառու չէ արտահայտություններին, ապա դրանք բառացի և տառացի վիրավորական արտահայտություններ չեն,նախատեսված են Դատական օր-ով, Դատավորների վարքագծի կանոններով, այլապես ինչպես արտահայտել այդ մասին Ինքնաբացարկի մեջ:

«Դատարանի դատողություններ» արտահայտությունը,սահմանված է ՀՀ քաղ. դատ. օր-ի 130-րդ հոդ-ի 3-րդ մասով, որպես փաստերի հաստատման ,ապացույցների գնահատման և իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ դատարանի դատողությունների ընթացքի և դրանից բխող եզրահանգումների վերաբերյալ որպես վճռի պատճառաբանվածու թյան գնահատման չափանիշ:

«Ոչ ճիշտ տեղեկություններ եք մատուցում դատավարության մասնակիցներին» արտահայտությունը իրականում հաստատված է՝09.02.2016թ. դատական նիստի վերջում և 10.02.2016թ.դատական նիստի սկզբում, դատավոր Ռ.Խանդանյանի կողմից, անշարժ գույքի գրանցման մարմնի ներկայացուցչին ուղղված հարցը, թե. «արդյոք կադաստրային գործն այրված է», որը շատ զարմացրեց բոլորին, քանի որ, Կադաստրային գործը գտնվում էր, դատավորի թևի տակ, գործի նյութերում էր գտնվում, նախկին դատավոր՝ Ա.Դարբինյանի կողմից, որպես ապացույց պահանջելու վերաբերյալ որոշումը, իսկ անշարժ գույքի կադաստրի ներկայացուցչի կողմից, գործի բնագիրը դատարանի գրասենյակ հանձնելու մասին, մուտքի կնիքով վավերացված դիմումը: Իսկ հայցվոր Կ.Խորասանյանը դատական նիստի ժամանակ, նշել է՝ՀՀ Վարչապետի անմիջական հսկողությամբ, բնագիր կադաստրային գործի նյութերն ծանոթանալու և պատճենահանելու նպատակով, իրեն տրամադրելու հանգամանքները/տես՝ դիմումը, որոշումը, դատական նիստերի ձայնագրությունը/: Իսկ որ ամենակարեվորն է՝ նեկայացնում է, դատավոր՝Ռ.Խանդանյանին, իր նկատմամբ սանկցիա ներկայացնելու մասին որոշում կայացնելուց հետո, դեռևս 04.02.2016թ. վերջինիս ստորագրված Հրամանի համաձայն /երկարատև կրթական ուսուցման ուղարկելու/ կապակցությամբ, դատավորի կողմից թիվ ՎԴ/8610/05/13թ. վարչական գործը և դրան կից բնագիր կադաստրային գործերը դատարանի գրասենյակ հանձնելու ընդունման-հանձնման ակտը/:

Սկսած 2013 թվականից, վստահորդների շահերին առընչվող վարչական գործով, իր որպես փաստաբանի պարտականություններն հետևողական իրականացնելը, դատավարական բոլոր գործողությունները, միջնորդությունները, դիրքորոշումները պայմանավորված են՝ դրա անհրաժեշտության հետ:

Ուստի, դատավորի կարգադրությունները չկատարել, դատական նիստերի բնականոն ընթացքը խոչընդոտելու միջոցով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորել չի կարող համարվել, իր վստահորդների շահերին ուղղված՝ Հայցի առարկան, հիմքը և ներառված պատասխանողների հերթականությունը, բովանդակությունը բացման խոսքում հայտնելը, դատավորի կողմից միջամտելու, խոչընդոտելու կապակցությամբ իրենց դիրքորոշումը պաշտպանելը, պնդելը, հայտնելը, նոտարին պատշաճ չծանուցված համարելը, դատավորի բավարար փորձառու չլինելը, նորանշանակ լինելը, օրենքը չիմանալը իսկ դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվել, դատավարական պարտականություններից անհարգելի պատճառներով ոչ պատշաճ կատարել չի կարող համարվել՝ Հայցվորի անունից Դիրքորոշում, երկու ինքնաբացարկ, գործով վարույթը կասեցնելու մեկ միջնորդություն ներկայացնելը, առաջին Ինքնաբացարկի մերժման որոշումը վերադասության կարգով բողոքարկելը, նոր հիմքով Ինքնաբացարկի միջնորդություն ներկայացնելու անհրաժեշտությամբ, գործի քննությունն ընդմիջելու միջնորդությունը:

Ներկայացնում է Հայցադիմումը և Վերաքննիչ վարչական դատարանի դատավոր Ա.Աբովյանի կողմից, դատավոր Ա.Դարբինյանի հայցն ընդունելու մերժման որոշումը՝05.12.2013թ. վերացնելու և իրենց վերաքննիչ բողոքը բավարարելու որոշումը, որը վկայում է՝

1. Իրենց հայցի առարկան, հիմքերը, պատասխանողներն, ըստ իրենց հիմնական հայցի և Վարչական վերաքննիչ դատարանի բավարարված որոշման հետ համապատասխանության մասին.
2. Իսկ դատավոր Ռ.Խանդանյանի կազմված մասնավորապես՝15.12.2015թ. <«Գործը դատաքննության նշանակելու մասին» թիվ ՎԴ/8610/05/13 որոշման բովանդակությունը՝ պատասխանողների, պահանջների /հիմնական, լրացուցիչ/,հիմքերի հերթականությանը չըհամապատասխանելու փաստերի մասին:

Համաձայն «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի՝ փաստաբանն իր գործունեությունն իրականացնելիս անկախ է, ղեկավարվում է միայն ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերով և օրենքներով, Փաստաբանական պալատի կանոնադրությամբ և Փաստաբանական վարքագծի կանոնագրքով:

2-րդ մասի՝արգելվում է պետական մարմինների, տեղական ինքնակառավարման, դրանց պաշտոնատար անձանց, ֆիզիկական և իրավաբանական անձանց (ներառյալ՝ զանգվածային լրատվության միջոցների) միջամտությունը փաստաբանական գործունեությանը:

4-րդ մասի՝փաստաբանը չի կարող հետապնդվել, պատասխանատվության և բերման ենթարկվել, ձերբակալվել, կալանավորվել կամ ենթարկվել իրավունքների այլ սահմանափակման իր մասնագիտական պարտականությունների կատարման կապակցությամբ, ներառյալ՝վարույթն իրականացնող և այլ մարմիններում հայտնած կարծիքի կամ դիրքորոշման համար:

Այսպիսով, պատասխանողը գտել է, որ դատավոր Ռ.Խանդանյանի կողմից, իր նկատմամբ սանկցիա կիրառելու մասին կազմած որոշումը զուրկ է իրավական հիմքից, չկան դրա հիմք հանդիսացող փաստերը հաստատող ապացույցներ: Խնդրել է որոշումն անհիմն ճանաչել:

Պալատի խորհրդի Պատասխանողը նույաբովանդակ բացատրություն է տվել: Նա հայտնել է, որ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք չի դրսևորել պաշտպանել է իր վստահորդի շահերը,միաժամանակ հայտնել է, որ 26.01.2016 թվականին մասնակի հրաժարվել է հայցից, բարոյահոգեբանական ճնշման տակ:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

2016 թվականի մայիսի 14-ին Հովհաննես Մաթևոսյանի կողմից կազմվել է եզրակացություն և հանձնվել ՀՀ Փաստաբանների պալատ:
2016 թվականի մայիսի 14-ին թիվ 333-Ա/ԿԳ-15168 կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդի անդամ Մելանյա Առուստամյանին (նիստը նախագահող):
Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությանը առարկություն չի ներկայացվել:
25.05.2016 թվականին գործը ընդունվել է վարույթ և նիստի օր է նշանակվել 25.07.2016թ-ին ժամը 18:30-ին ք.Երևան, Զաքիյան փողոց 2 հասցեում:
25.07.2016-ին նիստը հետաձգվել է: Նիստի օր է նշանակվել 29.09.2016-ին ժամը 18:30-ին (ք.Երևան, Զաքիյան փողոց 2 հասցեում):
29.09.2016-ի նիստը հետաձգվել է, նիստի օր է նշանակվել 12.10.2016թ (ք.Երևան, Զաքիյան փողոց 2 հասցեում):
12.10.2016թ նիստը հետաձգվել է, նիստի օր է նշանակվել 28.10.2016թ (ք.Երևան, Զաքիյան փողոց 2 հասցեում):
28.10.2016թ նիստը հետաձգվել է, նիստի օր է նշանակվել 10.11.2016թ (ք.Երևան, Զաքիյան փողոց 2 հասցեում):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. ՀՀ վարչական դատարանի վարույթում է գտնվում վարչական գործն ըստ հայցի Կարինե Խորասանյանի և Անուշ Դաշտոյանի ընդդեմ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, երրորդ անձ Խաչատուր Բահարյանի վարչական մարմնի գործողություններն ոչ իրավաչափ ճանաչելու և որպես հետևանք՝ առուվաճառքի պայմանագիրը, 02.06.2003 թվականին կատարված իրավունքի գրանցումն և 30.07.2008 թվականի վերագրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին: (Վարչական գործ թիվ ՎԴ/8610/05/13):

Տվյալ գործով Պատասխանողը հանդիսացել է Կարինե Խորասանյանի ներկայացուցիչը:
Ըստ «Դատալեքս» տեղեկատվական համակարգի գործը գտնվել է Վարչական դատարանի դատավոր Ա Դարբինյանի վարույթում :
Պատասխանողի կողմից հայտնվել է ինքնաբացարկի միջնորդություն 27.08 2015 թվականին դատավորը ինքնբացարկը ընդունել է:
15.10.2016թվականի գործը ընդունվել է դատավոր Ռ. Խանդանյանի վարույթ::
Մեկ նախնական նիստ է կայացել 2015 թվականի դեկտեմբերի 15-ին, որից հետո նշանակվել է դատաքննություն 26.01.2016թ., որից հետո կայացվել են դատական նիստեր 02.02.2016թ, 04.02.2016թ, 10.02.2016թ, 11.02.2016թ:
26.01.2016 թվականի դատական նիստի ընթացքում Հայցվորի ներկայացուցիչը մասնակի՝ ըստ հայցի Կարինե Խորասանյանի և Անուշ Դաշտոյանի ընդդեմ Կենտրոն նոտարական տարածքի նախկին նոտար Էմմա Շաբոյանի և Հայաստանի Հանրապետության նոտարական պալատի՝ նոտարի գործողություններն ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասով, հրաժարվել է հայցից:
Նշված փաստերը հաստատվում է «Դատալեքս» տեղեկատվական համակարգից հանված քաղվածքով:

2. 26.01.2016 թվականի դատական նիստի ընթացքում հայցվորների ներկայացուցիչ Սուսաննա Հարությունյանը միջնորդել է որպես վկա դատարան հրավիրել էմմա Շաբոյանին, սակայն դատարանը մերժել է միջնորդությունը
   Նշված փաստը հաստատվում է պատասխանողի բացատրությամբ, դատական նիստի կրիչով:
3. 02.02.2016թ պատասխանողը նշվածի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ ինքնաբացարկ հայտնելու միջնորդություն է ներկայացրել, որը դատարանի 04.02.2016 թվականի որոշմամբ մերժվել է:
   Նշված փաստը հաստատվում է «Դատալեքս» տեղեկատվական համակարգից հանված քաղվածքով պատասխանողի բացատրությամբ, դատարանի որոշմամբ:
4. Պատասխանողը վերաքննիչ բողոք է ներկայացրել ինքնաբացարկի միջնորդության մերժման որոշման դեմ: Նշված հիմքով պատասխանողը միջնորդել է կասեցնել գործի վարույթը: Դատարանը մերժել է այն:
   Նշված փաստը հաստատվում է պատասխանողի բացատրությամբ, դատարանի որոշմամբ:
5. Այնուհետև, 10.02.2016 թվականին պատասխանողի կողմից ինքնաբացարկ հայտնելու միջնորդություն է ներկայացրել, որը դատարանը քննարկման առարկա չի դարձրել, որից հետո, պատասխանողը խնդրել է դատական նիստը հետաձգել ինքնաբացարկի միջնորդության ներկայացնելու համար,

դատարանը չի տրամադրել:
Նշված փաստը հաստատվում է պատասխանողի բացատրությամբ, դատարանի որոշմամբ:

6. Դատարանի 10.02.2016 թվականի որոշմամբ դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվելու, դատավարական պարտականություններն անհարգելի պատճառներով չկատարելու և ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաև դատավորի կարգադրությունները չկատարելու համար փաստաբան Սուսաննա Հարությունյանի նկատմամբ կիրառվել է դատական սանկցիա նախազգուշացում դատարանի կողմից Նշված փաստը հաստատվում է պատասխանողի բացատրությամբ, դատական նիստի կրիչով:
7. Դատարանի կողմից դատական սանկցիա նախազգուշացում կիրառելուց հետո «դատարանի դատողությունները չեն համապատասխանում իրականությանը», «նման դատավորը մեզ հարիր չէ», «էլեմենտար կանոնները չեք պահպանում», «ոչ ճիշտ տեղեկություններ եք մատուցում դատավարության մասնակիցներին», «չգիտեք կամ անտեսում եք օրենքը», «որպես նորանշանակ դատավոր բավարար փորձառու և բանիմաց չեք», ««նախկին դատավորը քաշքշուկներ ստեղծեց» և այլև թույլ չեն տրվել պատասխանողի կողմից:
Նշված փաստը հաստատվում է պատասխանողի բացատրությամբ և դատական նիստի կրիչով:
8. Պատասխանողի կողմից «զոռբա եք» արտահայտություն առհասարակ դատական նիստի ընթացքում թույլ չի տրվել:
Նշված փաստը հաստատվում է պատասխանողի բացատրությամբ, դատական նիստի կրիչով:
9. 2016 թվականի փետրվարի 11-ի դատական նիստի ընթացքում Հայցվորի ներկայացուցչի բացման խոսքի ժամանակ, դատարանը միջամտել է պատասխանողին հրապարակել և ներկայացնել՝ Հայցվորների հիմնական հայցը, հիմքը:
Նշված փաստը հաստատվում է պատասխանողի բացատրությամբ և դատական նիստի կրիչով:
10. Վերաքննիչ վարչական դատարանը 19.02.2016 թվականին մերժել է պատասխանողի ներկայացրած վերաքննիչ բողոքը:
Նշված փաստը հաստատվում է Վարչական վարչական դատարանի 19.02.2016 թվականի որոշմամբ:

Գործում առկա է գործի համար նշանակություն ունեցող հետևյալ ապացույցները.

- ✓ Դատավոր՝ Ռ.Խանդանյանի կողմից 11.02.2016թվ կայացրած որոշման պատճեն, ըստ որի փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ

հարուցելու մասին դիմել է Պալատին:

- ✓ Պալատի նախագահի 09.03.2016թվ որոշումը, ըստ որի փաստաբան՝Սուսաննա Հարությունյանի նկատմամբ հարուցվել է թիվ-16052 կարգապահական վարույթ:
- ✓ Պալատի կողմից դիմողին և պատասխանողին 09.03.2016թվ ուղարկված Պալատի աշխատակազմի ղեկավարի ծանուցումները, ըստ որի բացատրվել է կողմերի իրավունքները և պարտականությունները:
- ✓ 14.03.2016թվ կազմված հանձման-ընդունման ԱԿՏ-ը, ըստ որի Պալատի կարգապահական գործերը համակարգողի կողմից թիվ- 16052 կարգապահական գործը հանձնվել է Պալատի կարգապահական գործ նախապատրաստողին :
- ✓ Պալատի կարգապահական գործ նախապատրաստողի կողմից 25.03.2016թվ ուղարկված ծանուցումը և փոստային անդորրագիրը, ըստ որի Սուսաննա Հարությունյանը պատշաճ ձևով ծանուցվել է բացատրություն տալու մասին:
- ✓ Պալատի կարգապահական գործ նախապատրաստողի կողմից 25.03.2016թվ ուղարկված ծանուցումը և փոստային անդորրագիրը, ըստ որի դատավոր՝Ռ.Խանդանյանը պատշաճ ձևով ծանուցվել է բացատրություն տալու մասին:
- ✓ Թիվ- ՎԴ/8610/05/13 գործով լազերային սկավառակը:
- ✓ Վարչական դատարանի նախագահի 05.02.2016թվ թիվ-04Ա հրամանի պատճեն, ըստ որի Ռ.Խանդանյանին տրամադրվել է արձակուրդ:
- ✓ Վարչական գործը վարույթ ընդունելու և նախնական դատական նիստ հրավիրելու մասին 12.03.2016թվ որոշման պատճեն:
- ✓ Ինքնաբացարկներ հայտնելու մասին միջնորդությանների պատճեներ:
- ✓ Դատավոր Ռ.Խանդանյանի 26.01.2016թվ որոշման պատճեն, ըստ որի գործի վարույթը մասով կարճվել է :
- ✓ Դատավոր Ռ.Խանդանյանի 15.12.2015թվ որոշման պատճեն, ըստ որի գործը նշանակվել է դատաքննության :
- ✓ Դատավոր Ռ.Խանդանյանի 15.12.2015թվ որոշման պատճեն,ըստ որի ոչ պատշաճ կողմը փոխարինվել է :
- ✓ Ս.Հարությունյանի կողմից 25.01.2016թվ դիրքորոշման պատճեն :
- ✓ Ս.Հարությունյանի կողմից ինքնաբացարկ ներկայացնելու միջնորդության պատճեն :
- ✓ Դատավոր՝Ա.Աբովյանի կողմից 05.12.2015թվ կայացրած որոշման պատճեն, ըստ որի վերաքննիչ բողոքը բավարարել է:
- ✓ Դատավոր՝Ռ.Խանդանյանի կողմից 04.02.2016թվ կայացված որոշումը,ըստ որի ինքնաբացարկը մերժել է:
- ✓ Դատավոր՝ Ա.Դարբինյանի 27.08.2015թվ որոշման պատճեն, ըստ որի ինքնացարկի միջնորդությունը բավարարվել է :
- ✓ Վերաքննիչ բողոքի պատճեն:

- ✓ Սուսաննա Հարությունյանի կողմից 25.04.2016թվ տրված բացատրությանը
- ✓ Սուսաննա Հարությունյանի 2610.2016թվականի դիմում բացատրությունը:
- ✓ Քաղվածք « Դատալեքս» տեղեկատվական համակարգից:
- ✓ Դատականի նիստի կրիչը:

6. **<u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>**

Համաձայն գործում առկա ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավար Գևորգ Գևորգյանի կողմից տրված տեղեկանքի փաստաբան Սուսանան Հարությունյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 1999 թվականին և նրա նկատմամբ՝ 2006-2016թթ ժամանակահատվածում 3 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ, որից մեկը կարճվել է, իսկ երկու դեպքում հայտարարվել է նկատողություն, տույժերը մարված են:

7. **<u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>**

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբանին նկատմամբ պետք է կարգապահական վարույթը կարճել հետևյալ հիմնավորումներով.

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **(այսուհետ նաև Օրենք)** 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար*:

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագիրք)** հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ վարույթի իրականացման» կարգի **(այսուհետ՝ Կարգ) 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝** *փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթներն են՝ … պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով փաստաբանների պալատին դիմելու մասին դատարանի սանկցիան:*

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. *«Դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելու կամ դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվելու կամ դատավարական պարտականություններն անհարգելի պատճառներով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, դատավորի կարգադրությունները չկատարելու, դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու կամ նիստի կարգը խախտող այլ գործողություն կատարելու միջոցով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու դեպքերում դատարանն իրավունք ունի վարչական դատավարությանը մասնակցող անձանց, ներկայացուցիչների և*

դատական նիստին ներկա այլ անձանց նկատմամբ կիրառելու հետևյալ սանկցիաները .... 4) պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով համապատասխանաբար գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատ դիմելը:»

Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ *Սույն հոդվածի առաջին մասի 4-րդ կետով նախատեսված* ***դատական սանկցիան պարտադիր հիմք է*** *դատախազի կամ* ***փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար****:*

Նշված իրավական նորմերից հետևում է, որ դատական սանկցիան կարգապահական վարույթ հարուցելու առիթ է և հիմք:

է Կանոնագրքի 4.1 կետի համաձայն (Վարվելակերպի կանոնները դատարանում) *փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև,* ***<u>պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին</u>****, այդ թվում* ***<u>հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին</u>****: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:*

Նշված կանոնը վկայակոչող (բլանկետային) է, քանի որ հղում է կատարում փաստաբանի և դատարանի փոխհարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտին, տվյալ դեպքում՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքին:

Վարչական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն

1. Կողմերն իրավունք ունեն՝

1) ծանոթանալու գործի նյութերին, ստանալու դրանց պատճենները, գործի նյութերից անելու քաղվածքներ, լուսանկարներ, լուսապատճեններ և պատճեններ.

2) անելու ինքնաբացարկ հայտնելու միջնորդություններ.

3) ներկայացնելու ապացույցներ և մասնակցելու դրանց հետազոտմանը.

4) հարցեր տալու միմյանց, դատավարության մյուս մասնակիցներին, վկաներին, փորձագետներին և թարգմանիչներին, միջնորդություններ անելու, բացատրություններ տալու դատարանին.

5) գործի քննության ընթացքում ծագող բոլոր հարցերի վերաբերյալ ներկայացնելու իրենց դիրքորոշումը, առաջարկները, առարկություններն ու փաստարկները.

6) առարկելու դատավարության մյուս մասնակիցների միջնորդությունների, դիրքորոշման կամ փաստարկների դեմ.

7) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում բողոքարկելու դատական ակտերը.

8) օգտվելու սույն օրենսգրքով իրենց վերապահված այլ դատավարական իրավունքներից:

2. Կողմերը կրում են սույն օրենսգրքով սահմանված դատավարական պարտականություններ:

3. Կողմերը պետք է բարեխղճորեն օգտվեն իրենց դատավարական իրավունքներից և բարեխղճորեն կատարեն իրենց դատավարական պարտականությունները:

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի 15-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ *Կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր կողմից վկայակոչած փաստերը:*

Նույն կարգի նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ *եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:*

Գործում առկա ապացույցների հետազոտությունը ցույց է տալիս, որ Դատավոր Խանդանյանը գործն իր վարույթ է ընդունել 16.10.2015 թվականին, մեկ նախնական նիստ է կայացել 2015 թվականի դեկտեմբերի 15-ին, որից հետո նշանակել է դատաքննություն 26.01.2016 թվականին:26.01.2016թվականին հայցվորի ներկայացուցիչը մասնակի հրաժարվել է հայցից: Որից հետո դատական նիստեր են տեղի ունեցել 2016 թվականի փետրվարի 02-ին,04-ին,10-ին,11-ին: Պատասխանողը պատշաճ ներկայացել է դատական նիստերին, հայտնել է թվով 2 ինքնաբացարկի միջնորդություն, գործի վարույթը կասեցնելու միջնորդություն: 2016 թվականի փետրվարի 10-ին նրա նկատմամբ կիրառվել է դատական սանկցիա նախազգուշացում: Նշված նախազգուշացումը ստանալուց հետո պատասխանողը թույլ չի տվել դատարանի հասցեին «դատարանի դատողությունները չեն համապատասխանում իրականությանը», «նման դատավորը մեզ հարիր չէ», «էլեմենտար կանոնները չեք պահպանում», «ոչ ճիշտ տեղեկություններ եք մատուցում դատավարության մասնակիցներին», «չգիտեք կամ անտեսում եք օրենքը», «որպես նորանշանակ դատավոր բավարար փորձառու և բանիմաց չեք», «զոռբա եք», «նախկին դատավորը քաշքշուկներ ստեղծեց» արտահայտություններ:

Դատարանը պատասխանողի կողմից ներկայացված կասեցման միջնորդությունը չի քննարկել, որը ներկայացվել էր ՝ ինքնաբացարկի միջնորդության որոշման դեմ բերված վերաքննիչ բողոք բերելու հիմքով:

Նախազգուշացում ստանալուց հետո պատասխանողը միջնորդել է հետաձգել դատական նիստը, ինքնաբացարկի միջնորդություն ներկայացնելու համար: 2016 թվականի փետրվարի 11-ի դատական նիստի ընթացքում Հայցվորի ներկայացուցչի

բացման խոսքի ժամանակ, դատարանը միջամտել է պատասխանողին հրապարակել և ներկայացնել՝ Հայցվորների հիմնական հայցը, հիմքը:

Խորհուրդը գտնում է, որ Պատասխանող Սուսաննա Հարությունյանը 2016 թվականի փետրվարի 10-ին դատական սանկցիա նախազգուշացում կիրառելուց հետո վիրավորական արտահայտություններ թույլ չի տվել ինչպես նախագահող դատավորի և երրորդ անձի ներկայացուցչի, այնպես էլ՝ սույն գործով որոշակի դատավարական գործողություններ կատարած նախկին դատավորի հասցեին:

Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողը դատական նիստի ընթացքում իր դատավարական իրավունքներից օգտվել է բարխղճորեն, դատավարական պարտականությունները կատարել է պատշաճ, դատական նիստերի բնականոն ընթացքը չի խոչընդոտել և դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք չի դրսևորել: Պատասխանողը օգտվել է իր դատավարական իրավունքներից և պարտականություններից և ցանկացել է առավելագույնս ներկայացնել իր վստահորդի շահերը: Դիրքորոշումներ հայտնելը, վկաներ հրավիրելու, ինքնաբացարկի միջնորդություններ ներկայացնելը կողմի դատավարական իրավունքն է, որից Պատասխանողը օգտվել է: Բոլորը հավասար են օրենքի և դատարանի առջև ու դատարանը պարտավոր է ապահովել, որ կողմերն ունենան հավասար հնարավորություններ գործի քննության ամբողջ ընթացքում, ներառյալ՝ յուրաքանչյուր կողմին ընձեռել քննվող գործի վերաբերյալ իր դիրքորոշումը ներկայացնելու լիարժեք հնարավորություն: Ինչ վերաբերում է գործի ողջամիտ ժամկետներին, ապա գործը դատավորի կողմից վարույթ էր ընդունվել 2015 թվականի հոկտեմբերի 16-ին, որից հետո պատասխանողը ներկայացել է բոլոր դատական նիստերին:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու որոշման դեմ վերաքննիչ բողոք ներկայացնելու պայմաններում, դատարանը շարունակել է գործի քննությունը՝ դատական նիստեր նշանակելով փետրվարի 10-ին, 11-ին:

Խորհուրդը արձանագրում է նաև, որ ըստ Պատասխանողի ինքը մասնակի հրաժարվել է հայցից գտնվելով հոգեբանական ճնշման տակ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8. հոդվածի1-ին մասի 2-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից 09.03.2016թ թիվ 84-Ա/ԿԳ-16052 որոշմամբ փաստաբան Սուսաննա Հարությունյանի (արտոնագիր

թիվ 343) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Սուսաննա Հարությունյանին և Դիմողին

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Մելանյա Առուստամյան